

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2013թ.

N\_\_\_\_\_ -Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Ղ» ՍԵՐԻԱՅԻ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԸ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 9.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրված՝  
շալցված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված, «Արտաքին տնտեսական  
գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2201, 2202 և  
2009 ծածկագրերի ապրանքախմբերին դասվող ապրանքների պարտադիր  
դրոշմավորման համար 2014 թվականի հունվարի 1-ից կիրառության մեջ դնել «Ղ»  
սերիայի դրոշմապիտակները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

#  
#  
#

#